ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ՇԵՆՔԻ ՆԵՐՔԻՆ ԱՇԽԱՏԱՍԵՆՅԱԿՆԵՐԻ ՀԱՏԱԿԱԳԾԱՅԻՆ ԼՈՒԾՈՒՄՆԵՐԻ ՁԵՎԱՓՈԽՄԱՆ ԵՎ ՀԱՐԴԱՐՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N «ԿՄՀՔ-ԳՀԱՇՁԲ-24/12»

«26» ապրիլ 2024թ.

ք.Հրազդան

Հրազդանի համայնքապետարանը, ի դեմս համայնքի ղեկավար **Ս.Միքայելյանի**, որը գործում է հիմնարկի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և **«ԶՕՏԱՏ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Տ.Հովհաննիսյանի և «Էլեկտրոնիկ գրուպ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ս.Վարդանյանի կոնսորցիումը,** որը գործում է հիմնարկի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված աշխատանքները (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները Կապալառուն կատարում է քաղաքաշինական նորմատիվատեխնիկական և հաստատված նախագծանախահաշվային փաստաթղթերին, ինչպես նաև սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է՝ համաձայն Հավելված թիվ 2-ի:
Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները սահմանված են սույն պայմանագրի հավելված 2-ում ներկայացված օրացուցային գրաֆիկով :

2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի աշխատանքային և տեխնիկական ռեսուրսով, շինարարական նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ)Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ)Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ)Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները.

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով.

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

3.2. Պատվիրատուն պարտավոր է՝

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով.

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին.

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք.

3.2.4 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

3.3. Կապալառուն իրավունք ունի՝

3.3.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

3.4. Կապալառուն պարտավոր է՝

3.4.1 Աշխատանքների առնվազն 75 տոկոսը կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր աշխատանքային և տեխնիկական ռեսուրսով , ինչպես նաև անհրաժեշտ շինարարական նյութերով, միջոցներով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը քաղաքաշինական նորմատիվատեխնիկական փաստաթղթերի և սույն պայմանագրի պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված ինժեներական հաղորդակցուղիների համակարգերի (էլեկտրամատակարարման, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխությանև այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման (շահագործման) համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր միջոցների հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.9 **Պայմանագրով երաշխիքային ժամկետ է սահմանվում Պատվիրատուի կողմից ողջ ծավալով Աշխատանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված 5/հինգ/տարին , եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված Աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:**

3.4.11 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

4.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

4.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.5 Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված ավարտված շինարարությունն ընդունող հանձնաժողով (այսուհետ՝ ընդունող Հանձնաժողով) ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար.

2) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում.

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 9-ի N 596-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ.

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում.

5) մինչև սույն կետով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարաժամկետ վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսից:

5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է **13 222 810 (տասներեք միլիոն երկու հարյուր քսաներկու հազար ութ հարյուր տաս)** ՀՀ դրամ: Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով:

5.4 Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված ամիսներին, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:

5.5 Ընդ որում վճարում կատարելու նպատակով հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրվելու օրվանից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն վճարման հանձնարարագիրը և հանձնման-ընդունման արձանագրության պատճենը մուտքագրում է լիազորված մարմնի գանձապետական համակարգ, իսկ սահմանված կարգի համաձայն ներկայացված փաստաթղթերի հիման վրա լիազորված մարմինը տվյալ վճարումը կատարում է հանձնման-ընդունման արձանագրությունը գանձապետական համակարգ մուտքագրված լինելու դեպքում՝ սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետներում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,1 (զրո ամբողջ մեկ տասնորդական) տոկոսի չափով:

6.3Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև աշխատանքի արդյունքը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից չընդունվելու դեպքում:

6.4Պայմանագրի 6.2, 6.3 և 6.5.1 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.5.1 Սույն պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման ողջ ընթացքում քաղաքաշինական նորմատիվատեխնիկական և հաստատված նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջների, այդ թվում շինարարական հրապարակի պատշաճ կազմակերպման, կահավորման, տեխնիկական անվտանգության, սանիտարահիգիենիկ և բնապահպանական (այդ թվում կլիմայի փոփոխության հետ հարմարվողականության միջոցառումների) նորմերի չպահպանման յուրաքանչյուր արձանագրված դեպքի համար Կապալառուի նկատմամբ կիրառվում է պատասխանատվության հետևյալ միջոցները:

6.6Պայամանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

8.6Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

8.7 Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.8 Համատեղ գործունեության պայմանագրի մասնակիցները կրում են համատեղ և համապարտ պատասխանատվություն: Ընդ որում, կոնսորցիումի անդամի կոնսորցիումից դուրս գալու դեպքում պայմանագիրը միակողմանիորեն լուծվում է և կոնսորցիումի անդամների նկատմամբ կիրառվում են պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցները:

8.9 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը, իսկ Կապալառուի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե աշխատանքների կատարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 7 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.10 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.11 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.12 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կապալառուի էլեկտրոնային փոստին:

8.13 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.14 Սույն պայմանագիրը կազմված է 13 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 4 և N 4.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.15 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.16 Պատվիրատուի իրավունքների ու պարտականությունների իրականացումը վերապահվում է Հրազդանի համայնքապետարանի վարչական շենքի սպասարկման և պահպանման հիմնարկին:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՊԱԼԱՌՈՒ	ՍՏԱՑՈՂ
Հրազդանի համայնքապետարան ք.Հրազդան, Սահմանադրության հրապարակ, 1 վարչական շենք Հրազդանի ՏԳԲ Հ/Հ 900122001440 ՀՎՀՀ 03027114	«ՋՕՏԱՏ» ՍՊԸ ՀՎՀՀ 02313792 ՀՀ, ք.Երևան, Գարեգին Նժդեհի փողոց, 10 շենք, 8 բն. „Արդշինբանկ„ ՓԲԸ h/h 24736071786200000	«Հրազդանի համայքապետարանի վարչական շենքի պահպանման և սպասարկման» հիմնարկ ք.Հրազդան, Սահմանադրության հրապարակ, 1 վարչական շենք Հրազդանի ՏԳԲ Հ/Հ900122001523 ՀՎՀՀ 03010714
Ա.ՄԻՔԱՅԵԼՅԱՆ (ստորագրություն)	Տ.Հովհաննիսյան (ստորագրություն)	Ա.ՄԵՍՐՈՊՅԱՆ

և <<Էլեկտրոնիկ գրուպ>>ՍՊԸ
կոնսորցիում
ՀՎՀՀ՝ 00469162
Հասցե՝ Երևան Սարի Թաղ 6-րդ շարք 22 տուն
Ինեկոբանկ ՓԲԸ
Հ/Հ 20500225524310 01

Ս. Վարդանյան
(ստորագրություն)

Հավելված N 1
, 26 ե ապրիլ 2024 թ. կնքված
ԿՄՀՔ-ԳՀԱՇՁԲ-24/12 ծածկագրով պայմանագրի

ՀՀ Կոտայքի մարզ, Հրազդան համայնք, Հրազդան քաղաքի համայնքապետարանի շենքի ներքին աշխատասենյակների հատակագծային լուծումների ձևափոխման և հարդարման աշխատանքներ

ԾԱՎԱԼԱԹԵՐԹ

Հ/հ	Աշխատանքների և ծախսերի անվանումը	Չ/մ	Քանակը	Միավորի արժեքը	Ընդհանուրը	Տոկոս ընդհանուր գումարից
1	2	1	4	5	6	7
	I. Համաշինարարական աշխատանքներ					
	1. Քանդման աշխատանքներ					
1	Գոյություն ունեցող պատերի սվաղի քանդում	մ^2	572.2	300	171660	
2	Նույնը, առաստաղների	մ^2	193.8	300	58140	
3	Լամինաթե հատակների քանդում	մ^2	195.9	600	117540	
4	Ցեմենտավազե հարթաշերտի քանդում	մ^2	195.9	600	117540	
5	d=60սմ միջնապատի մեջ բացվածքի բացում (5.7մ^2)	մ^3	3.42	80000	273600	
6	d=10սմ թեթև բետոնե սալերից շարվածքի քանդում	մ^3	5.48	11000	60280	
7	Շինաղբի մաքրում, բարձում ա/ինքնաթափի վրա	տ	60.0	3000	180000	
8	Տեղափոխում 5կմ	տ	60.0	2000	120000	
	Ընդամենը 1՝				1098760	
	2. Միջնապատեր					
1	60սմ հաստությամբ միջնապատի հատվածում բացվածքների փակում կանոնավոր կտրվածքի տուֆ քարով (L=6.8գծմ, H=2.1մ)	մ^3	8.6	30000	258000	
2	Շարվածքի ամրանավորում Φ6AcI դասի ամրանով	տ	0.025	500000	12500	
3	Միաձույլ ե/բ բարավորներ B15 դասի բետոնից (7.8գծմ)	մ^3	0.94	50000	47000	
4	Ամրան AcI դասի (Φ6)	տ	0.011	500000	5500	
5	Ամրան A500C դասի (Φ12)	տ	0.028	500000	14000	
	Ընդամենը 2՝				337000	
	3. Միջնորմներ					
1	Միջնորմների շարվածք 400x200x100մմ թեթև բետոնե բլոկներից (37.8մ^2)	մ^3	3.78	30000	113400	
2	Շարվածքի ամրանավորում	տ	0.054	500000	27000	
3	Ամրան AcI դասի (Φ8)	տ	0.025	500000	12500	
4	Ամրան A500C դասի (Φ10)	տ	0.029	500000	14500	
5	Միջնորմների ամրացում պատերի և առաստաղի հատվածում 100x63x6մմ անկյունակներով	տ	0.032	500000	16000	
6	Ամրանավորված անցքերի լցափակում B12.5 դասի մանրախիճ բետոնով	մ^3	0.027	50000	1350	
7	Հերմետիկ առաձգական ներդիրներ d=20մմ փրփրապլաստից	մ^2	4.1	5000	20500	
8	Միաձույլ ե/բ բարավորներ B15 դասի բետոնից (11.8գծմ)	մ^3	0.24	50000	12000	
9	Ամրան AcI դասի (Φ6)	տ	0.004	500000	2000	
10	Ամրան A500C դասի (Φ12)	տ	0.021	500000	10500	
11	Միջնորմներ երկկողմանի երեսպատված d=15մմ գիպսաստվարաթղթե սալերով, ցինկապատ պրոֆիլներից հիմնակմախքով, d=70մմ հանքաբամբակե ձայնամեկուսիչ շերտով	մ^2	87.8	12000	1053600	
	Ընդամենը 3՝				1283350	
	4. Հատակներ					
1	Հատակի ջրամեկուսացում 2 շերտ իզոգամով	մ^2	7.1	6000	42600	

2	Ցեմենտավազե շաղախից հարթաշերտ H=40մմ	մ2	195.9	1000	195900	
3	Հատակների երեսպատում խեցեսալերով	մ2	7.1	10000	71000	
4	Լամինաթե հատակ որակյալ գոլորշամեկուսիչ շերտով պլաստմասսայե շրիշակների տեղադրմամբ (H=70մմ, L=174.4մ)	մ2	177.3	8000	1418400	
5	Հատակների երեսպատում մամլագրանիտե սալերով	մ2	11.5	10000	115000	
6	Շրիշակներ մամլագրանիտե սալերից H=90մմ (17.6մ)	մ2	1.6	10000	16000	
	Ընդամենը 4՝				**1858900**	
	5. Ներքին դռներ					
1	Փայտե որակյալ երկփեղկ խուլ դուռ երկտակ լաքապատված, 2.3x2.7(H)մ (1 հատ)	մ2	6.21	150000	931500	
2	Փայտե որակյալ խուլ դռներ երկտակ լաքապատված, 0.9x2.1(H)մ (6 հատ)	մ2	11.34	120000	1360800	
3	Փայտե դռների փականներ, երկաթակապ իրեր	կ-տ	7	5000	35000	
4	Ալյումինե, կաղնեգույն, ապակեպատ դռներ, ներառյալ սարքերը (6 հատ)	մ2	11.03	70000	772100	
5	Ալյումինե, կաղնեգույն, խուլ դռներ, ներառյալ սարքերը (2 հատ)	մ2	3.05	70000	213500	
	Ընդամենը 5՝				**3312900**	
	6. Ներքին հարդարման աշխատանքներ					
1	Պատերի բարելավված սվաղ գաջե շաղախով	մ2	572.2	1000	572200	
2	Թեքությունների սվաղ գաջե շաղախով	մ2	36.0	1000	36000	
3	Պատերի բարելավված սվաղ ցեմենտավազե շաղախով	մ2	55.9	2000	111800	
4	Պատերի և թեքությունների բարձրորակ ներկում լատեքսային ներկով	մ2	608.2	2500	1520500	
5	Պատերի երեսպատում հախճասալերով H=1.6մ և H=2.4մ	մ2	55.9	12000	670800	
6	Առաստաղների բարելավված սվաղ գաջե շաղախով	մ2	193.2	1000	193200	
7	Առաստաղների բարձրորակ ներկում լատեքսային ներկով	մ2	193.2	2500	483000	
8	Կախովի առաստաղ շերտավոր պլաստմասսայից, հիմնակմախքի պատրաստմամբ	մ2	7.1	8000	56800	
	Ընդամենը 6՝				**3644300**	
	Ընդամենը I՝				**11535210**	**87.23721**
	II. Սառը ջրամատակարարման ներքին ցանց					
1	Ծորակ-խառնիչ լվացարանի համար 1 զույգ ճկուն փողրակով	կ-տ	2	15000	30000	
2	Ծորակ-խառնիչ խոհանոցակոնքի համար 1 զույգ ճկուն փողրակով	կ-տ	1	15000	15000	
3	Ծորակ-խառնիչ ցնցուղով	կ-տ	1	20000	20000	
4	Ճկուն փողրակ զուգարանակոնքի ջրամիացման համար 3/4"	հատ	2	2000	4000	
5	Բրոնզե փական պարուրակավոր DN20, PN10	հատ	1	6000	6000	
6	Պոլիպրոպիլենե խողովակ սառը ջրի համար PPR PN-10 Φ25x2.3մմ, փորձարկմամբ	մ	8.0	3000	24000	
7	Նույնը, PPR PN-10 Φ20x1.9մմ, փորձարկմամբ	մ	7.0	3000	21000	
8	Պոլիպրոպիլենե խողովակների ձևավոր մասեր PPR Φ20մմ,	հատ	10	1000	10000	
	Ընդամենը II՝				**130000**	**0.98315**
	III. Տաք ջրամատակարարման ներքին ցանց					
1	Պոլիպրոպիլենե, ալյումինե շերտով խողովակ տաք ջրի համար PPR PN-10 Φ25x4.2մմ, փորձարկմամբ	մ	8.0	3000	24000	
2	Նույնը, PPR PN-10 Φ20x2.8մմ, փորձարկմամբ	մ	7.0	3000	21000	
3	Պոլիպրոպիլենե խողովակների ձևավոր մասեր PPR Φ20մմ, Φ25մմ	հատ	10	200	2000	
4	Բրոնզե փական պարուրակավոր DN20, PN10	հատ	1	6000	6000	
5	Պոլիպրոպիլենե խողովակների մեկուսացում հատակի շերտի մեջ "Termoplex" խողովակով	մ	15.0	500	7500	

	Ընդամենը III				60500	0.45754
	IV. Կոյուղու ներքին ցանց					
1	Կոյուղու ոչ ճնշումային ՊՎՔ խողովակներ DN100	մ	13.0	2500	32500	
2	Նույնը, DN50	մ	2.0	2000	4000	
3	Լվացարան սիֆոնով	կ-տ	2	30000	60000	
4	Մեկտեղանի խոհանոցակոնք սիֆոնով, պահարանով	կ-տ	1	40000	40000	
5	Զուգարանակոնք ջրահեռացման ծալքավոր անկյունակով	կ-տ	2	30000	60000	
6	Լոգնոց ակրիլային 1700x800մմ	կ-տ	1	90000	90000	
7	Հոսակ չժանգոտվող պողպատից DN50	հատ	1	5000	5000	
8	Ձևավոր մասեր DN100	հատ	12	300	3600	
9	Ստուգիչ-մաքրիչ DN100	հատ	1	2000	2000	
	Ընդամենը IV՝				297100	2.24687
	V. Էլեկտրաուժային սարքավորումներ և էլեկտրալուսավորություն					
1	Մասնաշենքի ուժային վ ահանի ապամոնտաժում	հատ	1	2000	2000	
2	Ներկառուցվող բաշխիչ վահանի մոնտաժում ԱՊԲ-12	հատ	1	25000	25000	
3	Ավտոմատ անջատիչ 3P, C40A	հատ	1	8000	8000	
4	Ավտոմատ անջատիչ C25Ա, DY=30mA	հատ	5	9000	45000	
5	Ավտոմատ անջատիչ 1P, C6A	հատ	5	3000	15000	
6	Երկբևեռ միաֆազ վարդակ 16Ա, ներկառուցվող	կ-տ	28	1000	28000	
7	Միաֆազ վարդակ IP44, 16Ա	կ-տ	2	2500	5000	
8	Լուսավորության փոխանջատիչ մեկստեղնանի, 10Ա, ներկառուցվող	կ-տ	8	1500	12000	
9	Ուժային չհրկիզվող մալուխ ՎՎԳ$_{նգ}$ 3x4մմ^2	մ	160.0	1500	240000	
10	Նույնը, ՎՎԳ$_{նգ}$-0.66 3x2.5մմ^2	մ	380.0	1000	380000	
11	Նույնը, ՎՎԳ$_{նգ}$-0.66 3x1.5մմ^2	մ	490.0	500	245000	
12	Միացման տուփ Φ80x45մմ	հատ	20	100	2000	
13	Սանհանգույցի լուսատու ԼԵԴ լամպով 10վտ	հատ	3	1000	3000	
14	Առաստաղի լուսատու ԼԵԴ լամպով 40վտ, 4000K	հատ	38	5000	190000	
	Ընդամենը V՝				1200000	9.07523
	Ընդհանուրը՝				13222810	100%

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Հրազդանի համայնքապետարան
ք.Հրազդան, Սահմանադրության հրապարակ, 1 վարչական շենք
Հրազդանի ՏԳԲ
Հ/Հ 900122001440
ՀՎՀՀ 03027114

----------Ս.ՄԻՔԱՅԵԼՅԱՆ
(ստորագրություն)

ԿԱՊԱԼԱՌՈՒ

,,ՁՕՏԱՏԵ ՍՊԸ
ՀՎՀՀ 02313792
ՀՀ, ք.Երևան, Գարեգին Նժդեհի փողոց, 10 շենք, 8 բն.
,,Արդշինբանկ,, ՓԲԸ
h/h 2473607178690000

----------Տ.Հովհաննիսյան
(ստորագրություն)

և <<Էլեկտրոնիկ գրուպ>>ՍՊԸ կոնսորցիում
ՀՎՀՀ՝ 00469162
Հասցե՝ Երևան Սարի Թաղ 6-րդ շարք 22 տուն
Խնայբանկ ՓԲԸ
Հ/Հ 20500225524310 01

----------Ս.Վարդանյան
(ստորագրություն)

ՍՏԱՑՈՂ

,Հրազդանի համայքապետարանի վարչական շենքի պահպանման և սպասարկմանե հիմնարկ
ք.Հրազդան, Սահմանադրության հրապարակ, 1 վարչական շենք
Հրազդանի ՏԳԲ
ՀՀ900122001523
ՀՎՀՀ 03010714

----------Ա.ՄԵՍՐՈՊՅԱՆ

Հավելված թիվ 2
«26» ապրիլ 2024 թ. կնքված
ԿՄՀՔ-ԳՀԱՇՁԲ-24/12 ծածկագրով պայմանագրի

ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ

N o	Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների առանձին տեսակների անվանումներ	Աշխատանքների կատարման ժամկետը	
		Սկիզբը	Ավարտը
1	«Հրազդանի համայնքապետարանի շենքի ներքին աշխատասենյակների հատակագծային լուծումների ձևափոխման և հարդարման աշխատանքներ»	Պայմանագրի ուժի մեջ մտնելու հաջորդող աշխատանքային օրը	60 օրացուցային օրում

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Հրազդանի համայնքապետարան
ք.Հրազդան, Սահմանադրության հրապարակ, 1 վարչական շենք
Հրազդանի ՏԳԲ
Հ/Հ 900122001440
ՀՎՀՀ 03027114

----------Ս.ՄԻՔԱՅԵԼՅԱՆ
(ստորագրություն)

ԿԱՊԱԼԱՌՈՒ

«ՕՕՏԱՏԻՍՊԸ»
ՀՎՀՀ 02313792
ՀՀ, ք.Երևան, Գարեգին Նժդեհի փող., 10 շենք, 8 բն.
„Արդշինբանկ" ՓԲԸ
հ/հ 24736077786900000

----------Տ.Հովհաննիսյան
(ստորագրություն)

և <<Էլեկտրոնիկ գրուպ>>ՍՊԸ կոնսորցիում
ՀՎՀՀ՝ 00469162
Հասցե՝ Երևան Սարի Թաղ 6-րդ շարք 22 տուն
Իդեկոբանկ ՓԲԸ
հ/հ 20500225524310001

----------Ս.Վարդանյան
(ստորագրություն)

ՍՏԱՑՈՂ

«Հրազդանի համայքապետարանի վարչական շենքի պահպանման և սպասարկման» հիմնարկ
ք.Հրազդան, Սահմանադրության հրապարակ, 1 վարչական շենք
Հրազդանի ՏԳԲ
Հ/Հ900122001523
ՀՎՀՀ 03010714

----------Ա.ՄԵՍՐՈՊՅԱՆ

Հավելված N 3
« 26 » ապրիլ 2024 թ. կնքված
ԿՄՀՔ-ԳՀԱՇՁԲ-24/12 ծածկագրով պայմանագրի

Հ/Հ	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2024թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	45221142	«Հրազդանի համայնքապետարանի շենքի ներքին աշխատասենյակների հատակագծային լուծումների ձևափոխման և հարդարման աշխատանքներ»-					3 600 000	13 222 810	13 222 810	13 222 810	13 222 810	13 222 810	13 222 810	13 222 810	13 222 810

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Հրազդանի համայնքապետարան
ք.Հրազդան, Սահմանադրության հրապարակ, 1 վարչական շենք
Հրազդանի ՏԳԲ
Հ/Հ 900122001440
ՀՎՀՀ 03027114

-----------------------Ս.ՄԻՔԱՅԵԼՅԱՆ
(ստորագրություն)

ԿԱՊԱԼԱՌՈՒ

,ՁՕՏԱՏԽ ՍՊԸ
ՀՎՀՀ 02313792
ՀՀ, ք.Երևան, Գարեգին Նժդեհի փողոց, 10 շենք, 8 բն.
,,Արդշինբանկ,, ՓԲԸ
h/h 2473607178690000

-----------------------Տ.Յովհաննիսյան
(ստորագրություն)

ԵՒ <<Էլեկտրոնիկ գրուպ>>ՍՊԸ
կոնսորցիում
ՀՎՀՀ ՝ 00469162
Հասցե՝ Երևան Սարի Թաղ 6-րդ շարք 22 տուն
Ինեկոբանկ ՓԲԸ
Հ/Հ 2050022552431001

-----------------------Ս.Վարդանյան
(ստորագրություն)

ՍՏԱՑՈՂ

«Հրազդանի համայնքապետարանի վարչական շենքի պահպանման և սպասարկման» հիմնարկ
ք.Հրազդան, Սահմանադրության հրապարակ, 1 վարչական շենք
Հրազդանի ՏԳԲ
ՀՀ900122001523
ՀՎՀՀ 03010714

-----------------------Ա.ՄԵՍՐՈՊՅԱՆ